Ապրանքներ ավելացնում ենք անձնական տվյալների համանուն բաժնից:
Սեղմելով բաժնին բացված էջում կարող եք տեսնել երկու կոճակ՝

- Ավելացնել հավաքածու - հավաքածու(կոմպլեկտ) կարող եք ստեղծել եթե ունեք մեկից ավելի ապրանք: Հավաքածուները պետք է կազմված լինեն ձեր տեղադրած ապրանքներից:
- Ավելացնել ապրանք - ապրանքներ կայքում կարող եք ավելացնել, այնքան, որքան թույլ է տալիս ձեր ձեռք բերած փաթեթը:




## Ապրանքի ավելացում

Սեղմելով Ավելացնել ապրանք կոճակին բացված էջում անհրաժեշտ է՝

- Լրացնել ապրանքի անունը
- Ըստ անհրաժեշտության լրացնել կոդը: Այն պարտադիր չէ, եթե չունեք ապրանքի կոդ, կայքը ավտոմատ գեներացնում է:
- Ընտրել բաժինը, այնուհետև ենթաբաժինը:




Ենթաբաժինը ընտրելուց հետո կարող եք ըստ ցանկության ապրանքին կցել ֆիլտրեր:




Այնուհետև լրացնել գինը:Կարող եք ընտրել լրացնել և ցուցադրել կայքում դրամով կամ դոլարով: Ինչպես նաև եթե ակտիվացնեք պատվերով կոճակը ապա կայքում կցուցադրվի, որ տվյալ ապրանքը պատվերով է հնարավոր ձեռք բերել:




Կայքում առկա է գնի լրացման 3 տարբերակ՝

1. Ստանդարտ գին - ապրանքի արժեքն է, որը սահմանում է վաճառողը
2. Գրամով հաշվարկ - այս տարբերակն ընտրելիս լրացվում է մետաղի գրամի գինը, որը ավտոմատ բազմապատկվում է լրացված քաշի չափին, լրացվում է նաև քարերի ընդհանուր արժեքը ստացված արժեքը արտացոլվում է և կաբինետում և կայքում:




3. Գործ + գրամ հաշվարկ - այս տարբերակում խանութի ադմինը չի լրացնում մետաղի գինը, այն մետաղի տեսակի ընտրությունից հետո կայքի բազայից գալիս է ավտոմատ լոմի միավորի գնից: Քաշը, որը լրացվելու է բազմապատկվում է և ստացվում է հումքի գինը:



## Մետաղների և քարերի ընտրությունը և դրանց կապը գների հետ

Մետաղների և քարերի տեսակները, մետաղի հարգը արդեն իսկ ավելացված են, ձեզ մնում է միայն ընտրել անհրաժեշտ տեսակը:
Ապրանք ավելացնելուց կարող եք նաև ընտրել մետաղը, հարգը, նշել քաշը:
Մետաղի գինը գրելուց այն հաշվարկում է միայն Գրամով հաշվարկ գնային տարբերակը ընտրելու ժամանակ:

Մետաղի ընտրություն՝




Հարգի ընտրություն՝




Այնուհետև ըստ ցանկության կարող եք լրացնել քաշը: Մետաղի տեսակը, հարգը և քաշը ցուցադրվելու է ապրանքի ներսի էջում:

Տեսքը կայքում՝

Գլխավոր / Զարդերի տեսականի / Մատանի / Մատանի 108-0044



## Մատանի 108-0044

Զարդերի տեսականի / Մատանի
108-0044

| | |
|---|---|
| Մետաղի տեսակ | Սպիտակ ոսկի |
| Հարգ | 999 - 24kt |
| Մետաղի քաշ | 2.5 Գր. |
| Քար | Ադամանդ |
| Քարի քաշ | 10 Կտ. |
| Տեսակ | Կանացի |

Ինչպես արդեն վերը նշել ենք լրացնելով զարդի գրամի գինը այն ավտոմատ հաշվարկվում է Գրամով հաշվարկ գնային տարբերակը ընտրելուց:

### Մետաղներ

| Տեսակ | Հարգ | Քաշ (գրամ) | Զարդի գրամի գին | |
|---|---|---|---|---|
| Սպիտակ | 999 - 24kt | | | + |
| Կարմիր ո | 999 - 24kt | | | - |
| | | | | - |

### Քար

| | | |
|---|---|---|
| Տեսակ | Քանակ | |
| Քաշ (կարատ) | Քարի գին | + |
| Տեսակ | Քանակ | |
| Քաշ (կարատ) | Քարի գին | - |

***Նշում**՝ եթե ապրանքը ունի մեկ տեսակից ավել մետաղ քար, ապա առաջին տողի վերջում ավելացման(+) նշանին սեղմելով ավելանում է հավելյալ տող, որտեղից կարող եք ընտրել այլ մետաղի կամ քարի տեսակներ, եթե պատահական եք բացել, ապա փակել այն համապատասխան — կոճակին սեղմելով

**Քարի տեսակի ընտրություն**

Ավելացված տարբերակներից ընտրել քարի տեսակը՝




Լրացնել քանակը, քաշը(կարատը) և քարի գինը




***Նշում՝*** այս դաշտերը պարտադիր չեն լրացման համար, դրանք կրում են ինֆորմացիոն բնույթ, որը ապրանքի ներսի էջում ցուցադրվում է, բացի քարի գնից: Այն գումարվում է և ընդհանուր արժեք է կազմում՝ Գրամով հաշվարկ և Գործ + գրամ հաշվարկ գնային տարբերակներում:

Այնուհետև ըստ անհրաժեշտության կարող եք ընտրել բրենդ, որոնք արդեն իսկ ավելացված են: Բրենդները և համաշխարհային են և հայկական:

Ինչպես նաև կարող եք կիրառել թեգեր՝ որոնման համար: Մեկից ավելի թեգ գրելու դեպքում անհրաժեշտ է ստորակետով առանձնացնել իրարից:

Ինչպես նաև կարող եք լրացնել նկարագրություն:



Այնուհետև ավելացնել գլխավոր նկար, պատկերասրահում երևացող նկարներ՝ եթե կան և ընտրել պահպանման տարբերակներից մեկը՝ որպես սևագիր կամ ցուցադրել կայքում:
Որպես սևագիր պահպանելու դեպքում ապրանքը մնում է, ծեր ապրանքների բաժնում, չի ցուցադրվում կայքում:

Ապրանքը ցուցադրելու դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի կայքի ադմինիստրարտորը այն հաստատի, որից հետո արդեն ապրանքը կերևա կայքում:




## Հավաքածուի ստեղծում

Ինչպես արդեն վերը նշված է հավաքածու ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ մեկից ավելի ակտիվ ապրանք կայքում:

Անձնական տվյալների Ապրանքներ բաժնից սեղմելով **Ստեղծել հավաքածու** կոճակը բացված էջում անհրաժեշտ է՝

1. Անհ; Համակրաժեշտ է լրացնել հավաքածուի անվանումը

2. Կոդը, որը պարտադիր չէ լրացնել, եթե չունեք: Համակարգը այն կգեներացնի ավտոմատ
3. Ապրանքների ցանկից ընտրել այն ապրանքները, որոնք ներառված պետք է լինեն հավաքածուի մեջ:




Այնուհետև՝

4. Ընտրել բաժինը, որտեղ պետք է ցուցադրվի ստեղծվող հավաքածուն



5. Բաժինըվընտրելուց հետո ըստ ցանկության կարող եք կցել տվյալ բաժնի ֆիլտրներից




6. Ըստ ցանկության կցել բրենդ
7. Նշել գինը, ցանկության դեպքում կարող եք չնշել
8. Լրացնել նկարագրություն, նույնպես ոչ պարտադիր դաշտ է




9. Տեղադրել գլխավոր նկար
10. Ըստ ցանկության տեղադրել նկարներ պատկերասրահում

11. Ընտրել պահպանման տարբերակներից մեկը՝ որպես սևագիր կամ ցուցադրել կայքում:




Պահպանելուց հետո ադմինիստրատորը պետք է հաստատի ստեղծված հավաքածուն և դրանից հետո այն կցուցադրվի կայքում:

Տեսքը կայքում՝



Հավաքածուի մեջ ներառված են




Մատանի 108-0022

Քար Ադամանդ

Գին
~~10.000 ֏~~
9.000 ֏



Մատանի 108-0033

Քար Ադամանդ

Գին
30 ֏




Մատանի 108-0044

Քար Ադամանդ

Գին
10.030 ֏

***Նշում`** բոլոր ապրանքները և հավաքածուները մինչև հաստատելը դուք կարող եք խմբագրել, ջնջել: Արդեն հաստատված ապրանքները կարող եք ակտիվացնել/դեակտիվացնել (աչքի նշանով կոճակն է)

| Անուն | Ամսաթիվ | Կոդ | Բաժին | Հարգ | Գին |
|---|---|---|---|---|---|
| Հավաքածու | 11.04.2025<br>14.04.2025 | 108-9235135381 | Շղթա և կուլոն | | 150.000 ֏ |
| Մատանի | 11.04.2025<br>11.04.2025 | 108-0099 | Մատանի | Դեղին ոսկի | 100.000 ֏ |
| Մատանի | 11.04.2025<br>11.04.2025 | 108-0055 | Մատանի | Սպիտակ ոսկի | 10.000 ֏ |
| Մատանի | 11.04.2025<br>11.04.2025 | 108-0044 | Մատանի | Սպիտակ ոսկի | 10.030 ֏ |
| Մատանի | 11.04.2025<br>11.04.2025 | 108-0033 | Մատանի | Սպիտակ ոսկի | 30 ֏ |
| Մատանի | 11.04.2025<br>18.04.2025 | 108-0022 | Մատանի | Կարմիր ոսկի | 10.000 ֏ |